

Պակուցում մը հոգեգրաւ հոն կը թողու զիս անթարթ,  
Կը զգամ համբոյրն իմ հոգիս պարուրող բիլ մարմաշին 1[1]:

Մեղեսիկի երանգներ կ'օծեն պարոյրը խունկին.  
1[1]խորհուրդին եմ ծնրադիր բազուկներըս խաչանիշ՝  
Ու կըսպասեմ որ ծագի հոգւոյս պայծառ Կիրակին...

Ջահերն հիմակ կ'երազե՞ն համակ զիւմրիւթ ու թարշիշ...  
Կամարներէն, խորանէն կը ծագին լոյս ու ծիծաղ.  
Յոգիս քիչ քիչ կը թաղուի անուրջին մէջ այս չքնաղ:

Յուշիկ փախչող իրիկուան ծիրանի լոյսն է զըւարթ...

## 17. ՆՈՊԱՆԵՐԸ

Մթութեան մէջ վըհուկի մը պէս թախծադեմ,  
Ցաւոտ Սիրոյ հարուածն է որ կ'իջնէ կուրծքիս.  
Ու Տենչանքի ծիրանիէն հրաշէկ հոգիս  
Դեմ կ'ընդգրկէ 1[1] յիշատակներ՝ զորըս կ'ատեմ:

Բոլոր լոյսերն ալ մարեցան հետըզհետէ.  
Ես կը սիրեմ այս խաւարը տառապագին,  
Ուր վիշտ մը լայն՝ սիրտըս կուրծքէս դուրս կը նետէ,  
Եւ 1[1] ես կ'ըմպեմ սեւ հեշտանքը ցաւոտ Կեանքին:

Խաւարին մէջ չունիմ խարխափն Երազանքին,  
Ու կը դադրիմ սերերու շուրջ թափառելէն.  
Բոցեղ աչքերս ունին կայծակ մը թախծագին,  
Սիրտես ցաւերն հեծքեր վայրագ լոկ կը խըլեն:

## 18. ՏԱՊԻ ՆՈՊԱՆԵՐ

Ջըրաշոգին գետին վրայէն ամպանըման կը բարձրանայ.  
Կը փողփողին լազուարթ գոյներ ճամբան ի վեր Կապոյտ-Դարին.  
Շինականներ արեւահար ծերունի մը գիւղակ տարին.  
Արեգակի բորբ ընծիւղներ կ'այրեն ամէն իր անխընայ:

Դարուղիէն կ'անցնին դանդաղ ուղտերը գորշ կարաւանին,  
Թաթաւելով իրենց հոգին հըրայրքին մէջ այս տօթական,